

«ՅՈՒՆԻԼԻԶԻՆԳ» ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ ԿՈՂՄԻՑ
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ
ԼԻԶԻՆԳԻ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ)
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2008թ.

1. Ընդահուր դրույթներ

1.1 Սույն Կարգով սահմանվում է «Յունիլիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Լիզինգային կազմակերպություն) կողմից ՀՀ տարածքում գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ հաճախորդ) լիզինգային (ֆինանսական վարձակալության) ծառայությունների (այսուհետ՝ Լիզինգ) մատուցման գործընթացը:

2. Հասկացություններ և սահմանումներ

2.1 «Լիզինգ»՝ գործունեության տեսակ է, որով տեղի է ունենում գույքի ձեռքբերում և վերջինիս հանձնում հաճախորդներին լիզինգի պայմանագրի հիման վրա՝ լիզինգի պայմանագրում նշված որոշակի վճարի դիմաց, որոշակի ժամկետով և պայմաններով, լիզինգ ստացողի կողմից հետագայում գույքի գնման պայմանով:

2.2 **Լիզինգային հարաբերությունների հիմնական մասնակիցներն են** (սուբյեկտները)՝ Լիզինգային կազմակերպությունը (Լիզինգ տրամադրող կամ Վարձատու). որը ներգրավված կամ սեփական դրամական միջոցներով լիզինգային գործարքի շրջանակներում սեփականության իրավունքով ձեռք է բերում գույք և որպես լիզինգի առարկա, որոշակի վճարի դիմաց, որոշակի ժամկետով և պայմաններով հանձնում է այն լիզինգ ստացողի (Վարձակալի) ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը՝ վարձակալին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմամբ:

2.3 «Լիզինգ ստացողը կամ Վարձակալ»՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը համաձայն լիզինգի պայմանագրի որոշակի վճարի դիմաց, որոշակի ժամկետով և պայմաններով ընդունում է լիզինգի առարկան ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը:

2.4 «Վաճառող (մատակարար)»՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը համաձայն առք ու վաճառքի պայմանագրի լիզինգի առարկա հանդիսացող գույքը վաճառում է Վարձատուին:

2.5 «Լիզինգի առարկա» կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ցանկացած չսպառվող գույք, այդ թվում՝ սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ հիմնական միջոցներ:

2.6 «Լիզինգի պայմանագիր»՝ պայմանագիր է, որով Վարձատուն պարտավորվում է Վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել Վարձակալի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել այն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը: Լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է Վարձատուն:

2.7 «Լիզինգային վճարումներ»՝ լիզինգային պայմանագրով նախատեսված վճարումներն են (ամսեկան, եռամսյակային), որոնք ներառում են լիզինգային պայմանագրով սահմանված հիմնական պարտքը, տոկոսը, Լիզինգային կազմակերպության մարժան, գույքահարկը, լիզինգի առարկայի ապահովագրումը, գրանցման և այլ վճարներ:

3. Լիզինգային գործառնությունների կարգավորումը

3.1 Լիզինգային գործունեությունը կարգավորվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքի 677-684 հոդվածներով:

4. Լիզինգի գործընթացը

N	ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ	ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1	Գույքի լիզինգի հայտի ստացում	Ձև՝ Հավելված N 1 Հայտը ուղղվում է լիզինգային կազմակերպությանը
2	Լիզինգային կազմակերպության հետ լիզինգի նախնական պայմանների համաձայնեցում	Հայտում նշված գույքը լիզինգ տալու սկզբունքային հնարավորության և պայմանների որոշում (ժամկետ, դրույք, կանխավճարի չափ)
3	Իրավաբանական և ֆինանսական փաստաթղթերի ներկայացում	Ցուցակ՝ Հավելված N 3
4	Հայտի քննարկում Լիզինգային կազմակերպության Ֆինանսական բաժնի կողմից	
Կազմակերպության ղեկավարության կողմից դրական որոշման ընդունման դեպքում		
5	Լիզինգի պայմանագրի կնքում և պայմանագրով նախատեսված կանխավճարի ստացում	Ձև՝ Հավելված N 4 Կանխավճարը պետք է կազմի առք-վաճառքի պայմանագրի գումարի առնվազն 10% + ապահովագրական վճար լիզինգի առաջին տարվա համար և այլ հնարավոր միանվագ վճարումներ
6	Լիզինգային պայմանագրի կնքում և պայմանագրով նախատեսված դրամական միջոցների ստացում	Ոչ ավել քան առք-վաճառքի պայմանագրի գումարի 90% -ը
7	Գույքի առք-վաճառքի պայմանագրի կնքում Վաճառողի հետ, վճարումը և գույքի ստացումը համաձայն գույքի հանձնման-ընդունման ակտի	
8	Գույքի հանձնում Վարձակալին համաձայն հանձնման-ընդունման ակտի	
9	Գույքի ապահովագրում՝ Լիզինգային կազմակերպության օգտին	
10	Լիզինգի պայմանագրով նախատեսված լիզինգային վճարումների ստացում	

5. Լիզինգային ծառայության ընդհանուր նկարագրությունը

N	ԴՐՈՒՅԹ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1.	Վարձակալին ներկայացվող պահաջներ	1. ՀՀ ռեզիդենտ՝ իրավաբանական կամ Անհատ ձեռնարկատեր, որն օրինական հիմքերով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

		<p>2. Բիզնեսի գործողության ժամկետը մեկ տարուց ոչ պակաս կամ առնվազն վեց ամիս է, եթե առկա է Վարձատուի այլ բիզնեսի արդյունավետ ուղղություն:</p> <p>3. Բիզնես-պլանի հիման վրա պաշտոնական և կառավարչական հաշվետվության վերլուծությունը* պետք է հաստատի Վարձակալի ֆինանսական կայունությունը և վերջինիս կողմից լիզինգի պայմանագրի պայմանների՝ լրիվ ծավալով կատարման ունակությունը:</p> <p>4. Բացասական վարկային պատմության բացակայություն:</p> <p>5. Լիզինգի առարկայի գնման համար սեփական միջոցների առկայություն՝ առնվազն 20%-ի չափով, ինչպես նաև լրացուցիչ միջոցների առկայություն՝ գույքի ապահովագրման, պետական մարմիններում գույքի գրանցման հետ կապված ծախսերի և այլ պարտադիր վճարումների կատարման համար:</p>
2.	Լիզինգի առարկա	<p>Տրանսպորտ՝ բեռնատար, մարդատար, հատուկ տրանսպորտ, գյուղատնտեսական, շինարարական և ճանապարհային տեխնիկա:</p> <p>Սարքավորումներ՝ իրացվելի արդյունաբերական և տեխնոլոգիական սարքավորումներ, որոնք ունեն երկրորդային շուկա:</p>
3.	Լիզինգի պայմանագիր	Կնքվում է Լիզինգային կազմակերպության և Վարձակալի միջև՝ մինչև 60 ամիս ժամկետով:
4.	Լիզինգի պայմանագրի պայմաններ	<p>Նվազագույն գումար. Տրանսպորտ՝ 4.0 մլն դրամ Սարքավորում՝ 5.0 մլն դրամ</p> <p>Նվազագույն գումարն իրենից ներկայացնում է գույքի առք-վաճառքի պայմանագրի գումարը:</p> <p>Վարձակալի կանխավճարը 10%-ից ոչ պակաս, նախընտրելի է 30%:</p>
5.	Լիզինգի պայմանագրի արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո Եթե լիզինգի պայմանագիրը կնքվել է օտարերկրյա արժույթով, ապա պայմանագրով նախատեսված վճարումը կատարվում է դրամով՝ Լիզինգային կազմակերպության կողմից վճարման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:
6.	Լիզինգային վճարումներ	Ամսեկան, որոնք ներառում են գույքի մաշվածությունը, Լիզինգային կազմակերպության տոկոսը, գույքահարկը, ապահովագրավճարը և պետական մարմիններում գույքի գրանցման վճարները:
7.	Լիզինգի պայմանագրին ներկայացվող պահանջներ	Պայմանագրում պետք է նշվի, որ գույքը հաշվառվում է Լիզինգային

		կազմակերպության հաշվեկշռում և ապահովագրվում է ի շահ Լիզինգային կազմակերպության:
8.	Գույքի ապահովագրում	Լիզինգի առարկան ապահովագրվում է կորստի, վնասվածքի, ոչնչացման ռիսկերից Լիզինգային կազմակերպության կողմից հավատարմագրված ապահովագրական ընկերություններում:
9.	Առք-վաճառքի պայմանագրի ներկայացվող պահանջներ	Պայմանագրում պետք է նշվի, որ գույքը գնվում է որոշակի անձին (նշելով Վարձակալի անունը) լիզինգ հանձնելու նպատակով: Այսպիսով, մատակարարը կրում է երաշխիքային պարտավորություններ ինչպես Վարձատուի, այնպես էլ Վարձակալի առջև:
10.	Լրացուցիչ պայմաններ	Հաճախորդին լիզինգային ծառայության մատուցման մասին որոշման ընդունումը հնարավոր է մինչև Լիզինգային կազմակերպությունում հաշվարկային հաշիվ բացելը: Սակայն լիզինգային պայմանագրի կնքման պահին հաճախորդը պարտավոր է Լիզինգային կազմակերպությունում բացել հաշվարկային հաշիվ:

* ուշադրություն Լիզինգային կազմակերպության մասնագետների համար. Վարձակալի վերլուծության ընթացքում վերջինիս ֆինանսական վիճակին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- դրական սեփական կապիտալ
- սեփական շրջանառու միջոցների առկայություն
- վերջին հաշվետու տարվա արդյունքներով վնասների բացակայություն (ոչ հարկային)
- չկարգավորված, ժամկետանց դեբիտորական/կրեդիտորական պարտքի բաժինը չի գերազանցում վերջին երկու եռամսյակներում հաշվարկված՝ Վարձակալի միջին ամսական հասույթի 10%-ը
- բյուջեին և արտաբյուջետային ֆոնդերին ժամկետանց պարտքի բացակայություն
- լիզինգային վճարման չափը չպետք է գերազանցի վերջին երկու եռամսյակներում հաշվարկված՝ Վարձակալի միջին ամսական հասույթի (եկամուտի) 10%-ը: Իսկ վարկերով և փոխառություններով կրած այլ պարտականությունների հետ միասին՝ ոչ ավել քան վերջին վեց ամսվա համար հաշվարկված միջին ամսական հասույթի 50%-ը: Լիզինգային կազմակերպության կողմից Վարձակալին վերոնշյալ պայմաններից շեղումով լիզինգային ծառայության մատուցումը հնարավոր է միայն Լիզինգային կազմակերպության Ֆինանսական բաժին՝ համոզիչ փաստարկների առկայության դեպքում:

Լիզինգային ծառայության մատուցման գործընթացում **մասնակցող աշխատակիցները՝**

- Հաճախորդների ներգրավման համար պատասխանատու աշխատակիցները /մասնագետները/, որոնց պաշտոնական պարտականությունների մեջ է մտնում նաև հաճախորդների որոնումը և բանակցությունների վարումը,

- Գործադիր տնօրենի աշխատակազմի իրավաբանը,

6. Լիզինգային գործարքի ձևակերպմանը և ուղեկցմանը մասնակցող

Լիզինգային կազմակերպության ստորաբաժանումների գործառույթները

N	ԳՈՐԾԱՌՈՒՅԹ	ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ
1	Գույքի լիզինգի հայտի ստացում	Ֆինանսական բաժին.
2	Հայտում նշված գույքը լիզինգ տալու տեխնիկական հնարավորության որոշում Սահմանվում է լիզինգի առարկայի ձեռքբերման հնարավորությունը, արտադրության և մատակարարման ժամկետները, մաքսային ձևակերպման չափանիշները, տեղակայման ժամկետը և այլն: Նախընտրելի է այն գույքը, որը գտնվում է ՀՀ տարածքում, մատակարարի պահեստում կամ արտադրվում է նվազագույն ժամկետներում մատակարարման բարձր արագությամբ (15-30 օր): Բացի դրանից, գույքը պետք է իրացվելի լինի երկրորդային շուկայում և/կամ գույքի մատակարարի (արտադրողի) հետ պետք է կնքվի հետգնման պայմանագիր:	Ֆինանսական բաժին.
3	Լիզինգային գործարքի հիմնական պայմանների համաձայնեցում (գումար, ժամկետ, դրույք, լիզինգային վճարումների մոտավոր հաշվարկ):	Ֆինանսական բաժին.
4	Անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստում և ներկայացում՝ ըստ Հավելված 3-ի:	Ֆինանսական բաժին.
5	Վարձակալի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա վերջինիս իրավական և ֆինանսական վերլուծություն՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան եզրակացության ներկայացմամբ:	Ֆինանսական բաժին.
6	Շուկայական արժեքը պարզելու նպատակով լիզինգի առարկայի գնահատում՝ համապատասխան եզրակացության ներկայացմամբ:	Ֆինանսական բաժին.
7	Հայտի քննարկում	Ֆինանսական բաժին.
Դրական որոշման ընդունման դեպքում		
8	Լիզինգի պայմանագրի կնքում Իրավաբանը անցկացնում է պայմանագրի փորձաքննություն, եթե նրա ձևը տարբերվում է տիպայինից:	Իրավաբան
9	Վարկային պայմանագրի կնքում Իրավաբանն անցկացնում է վարկային պայմանագրի փորձաքննություն, եթե նրա ձևը տարբերվում է տիպայինից:	Իրավաբան

10	Գույքի առք Առուվաճառքի պայմանագրի պարտադիր պահանջ է այն, որ գույքը գնվում է որոշակի անձին լիզինգ հանձնելու նպատակով (պետք է նշել Վարձակալի անունը): Այսպիսով, վաճառողը կրում է երաշխիքային պարտավորություններ ինչպես Գնորդի, այնպես էլ Վարձակալի առջև:	Ֆինանսական բաժին. Իրավաբան
11	Լիզինգի առարկայի ապահովագրում: Ապահովագրման պայմանագրով շահառու է հանդիսանում Լիզինգային կազմակերպությունը: Իրավաբանն անցկացնում է ապահովագրման պայմանագրի փորձաքննություն, եթե նրա ձևը տարբերվում է տիպայինից:	Ֆինանսական բաժին. Իրավաբան
12	Գույքի հաշվառում Լիզինգային կազմակերպության հաշվեկշռում: Իրավաբանն անցկացնում է գրավի պայմանագրի փորձաքննություն, եթե նրա ձևը տարբերվում է տիպայինից:	Հաշվապահություն Ֆինանսական բաժին. Իրավաբան
13	Գույքի հանձնումը լիզինգով՝ փոխանցումը հավաստող հանձնման-րնդունման ակտի ստորագրությամբ:	Ֆինանսական բաժին.
14	Լիզինգային վճարումների ստացում:	Հաշվապահություն Ֆինանսական բաժին.
15	Վարձակալի և լիզինգի առարկայի մոնիտորինգ, որն անցկացվում է առնվազն կիսամյակը մեկ անգամ՝ ֆինանսական հաշվետվություններ ստանալու և լիզինգի առարկան զննելու միջոցով (ակտի տրամադրմամբ):	Ֆինանսական բաժին.
16	Լիզինգային գործարքի փակում, ինչպես նաև գույքը՝ Վարձակալի սեփականությանը փոխանցման և հաշվարկների համեմատման ակտերի ստորագրություն:	Հաշվապահություն Ֆինանսական բաժին.

7. Լիզինգային կազմակերպության գործողությունները վճարումների ուշացման դեպքում

7.1 Լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Լիզինգային կազմակերպությանը: Եթե Վարձակալը ուշացնում է վճարումները մինչև 30 օր ժամկետով, նա պարտավոր է վճարել պայմանագրով նախատեսված տույժ (յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար չվճարված գումարի 0.2%-ի չափով):

7.2 Եթե լիզինգային վճարումները ուշացվում են ավելի քան 30 օրով, իսկ ամսեկան մարման ժամանակացույցի դեպքում դա հանգեցնում է լիզինգային երկու անընդմեջ վճարումների ուշացման, ապա Վարձատուն կանգնեցնում է գույքի շահագործումը: Այս դեպքում բացահայտվում է գույքի շահագործման կանգնեցման պատճառը և կազմվում է համապատասխան ակտ: Լիզինգային կազմակերպության պատասխանատուը աշխատակիցը տեղեկացնում է Լիզինգային

կազմակերպության Գործադիր տնօրենին կասկածելի պարտքի առկայության վերաբերյալ, ինչի արդյունքում Գործադիր տնօրենն որոշում է կայացնում լիզինգի պայմանագրի դադարեցման և գույքի ետ վերադարձման նպատակահարմարության մասին: Նշված որոշման ընդունման դեպքում Վարձակալի հետ են հանդիպում կազմակերպության աշխատակիցները: Վարձակալի կողմից լիզինգի պայմանագրով նախատեսված պարտավորությունները մարելու անկարողության դեպքում գույքը դուրս է բերվում և իրացվում երկրորդային շուկայում՝ մնացորդային արժեքով: Վճարված լիզինգային մուծումները ետ չեն վերադարձվում:

7.3 Գույքի՝ երկրորդային շուկայում վաճառքի գործընթացի պարզեցման համար լիզինգային գործարքի պլանավորման ժամանակ նպատակահարմար է սարքավորման (տեխնիկայի) մատակարարի հետ կնքել հետզման պայմանագիր:

8. Հաճախորդ-Վարձակալի առավելությունները

8.1 Լիզինգը ենթադրում է Վարձակալի 70-80%-ով վարկավորում երկար ժամկետով (ապրանքային տեսքով), ինչը հնարավորություն է տալիս առանց զգալի ֆինանսական լարվածության (կատարվում են միայն լիզինգային վճարումները) նորացնել արտադրական ֆոնդերը, ձեռք բերել թանկարժեք գույք:

8.2 Լիզինգային վճարումները հանդիսանում են արտադրական ծախքեր և գումարվելով ինքնարժեքին՝ նվազեցնում են Վարձակալի հարկվող շահույթը:

8.3 Այդ նույն միջոցները միանգամից դուրս չեն բերվում Վարձակալի շրջանառությունից՝ բերելով լրացուցիչ շահույթ:

8.4 Լիզինգային գործունեությունն ուղղված է արտադրական ճյուղերում ներդրումային ակտիվության բարձրացմանը, ինչը հատկապես կարևոր է կապիտալ ներդրումների ֆինանսավորման ավանդական աղբյուրների դեֆիցիտի պայմաններում:

8.5 Լիզինգով գույք ստանալը, որպես կանոն, ավելի հեշտ է, քան գույքը գնելու նպատակով վարկ ստանալը, քանի որ լիզինգային գույքը հանդիսանում է գրավի առարկա:

8.6 Լիզինգային համաձայնությունն ավելի ճկուն է քան վարկայինը, քանի որ երկու կողմերին էլ հնարավորություն է տալիս մշակել վճարումների հարմար սխեմա (որպես հնարավոր տարբերակներից կարելի է նշել վճարումների լողացող դրույքներ): Դա առավել արդիական է ֆինանսական միջոցների դեֆիցիտի պայմաններում:

8.7 Գույք արտադրողները ստանում են իրենց արտադրանքը սպառելու լրացուցիչ հնարավորություններ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Լիզինգով գույք վերցնելու հայտ
2. Առուվաճառքի տիպային պայմանագիր
3. Հավելված
4. Հանձնման ակտ
5. Ֆինանսական վարձակալության /լիզինգի/ պայմանագիր

“Յունիլիզինգ” վարկային կազմակերպություն ՓԲԸ

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՀԱՅՏ

Գույքի նկարագրություն՝

N	Անվանումը, տարատեսակը, մոդելը	Քանակը	Միավորի արժեքը (ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ)	Ամորտիզացիոն խումբ	Արտադրող/վաճառող
1					
2					
3					
4					
5					
6					

Լիզինգի առաջարկվող ժամկետ _____ ամիս:

Ձեռնարկության ղեկավար՝

Ա.Ա.Հ.	
Պաշտոնը	
Հեռախոսահամարներ	
Էլեկտրոնային փոստ	

Ներկայացուցիչ անձ՝

Ա.Ա.Հ.	
Պաշտոնը	
Հեռախոսահամարներ	
Էլեկտրոնային փոստ	

Դիմողը՝ լիզինգի առարկայի արտադրողին և վաճառողին հայտարարելով, պատասխանատվություն է ստանձնում նշված գույքի քանակի, անվանացանկի, տեխնիկական բնութագրերի, ինչպես նաև ձեռք բերման հետ կապված ֆինանսական ռիսկերի համար:

Լիզինգի ֆինանսական պայմանների համաձայնեցումից հետո պարտավորվում եմ տրամադրել բիզնես-ծրագիր կամ/և բիզնես-հիմնավորումը, հաշվետվություններ և ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր:

(ձեռնարկության ղեկավարի ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

(ամսաթիվ)

ՄԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. « _____ » _____ 200 թ.

«-----» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Գ-նորդ», ի դեմս _____ որը գործում է _____

/կանոնադրության, լիազորագրի կամ այլնի/

հիման վրա, մի կողմից, և _____ (այսուհետ՝ «Վաճառող») ի դեմս _____ որը գործում է _____

_____ հիման վրա, մյուս կողմից,

/կանոնադրության, լիազորագրի կամ այլնի/

միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Քանզի Գ-նորդը _____ թ-ին կնքել է ֆինանսական վարձակալության (լիզինգ) պայմանագիր « _____ » ՍՊԸ հետ՝ ի դեմս տնօրեն _____ (այսուհետ՝ «Վարձակալ») և համաձայն այդ պայմանագրի պատրաստվում է գնել Վարձակալի կողմից որոշված Վաճառողից և Վարձակալի կողմից նշված սարքավորումը և վճարի դիմաց ֆինանսական վարձակալությամբ (լիզինգ) ժամանակավոր տիրապետման պայմանով հանձնել այն Վարձակալին:

Ուստի Կողմերը համաձայնվում են հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը վաճառում է, իսկ Գ-նորդը սեփականության իրավունքով գնում է սույն Պայմանագրի հավելվածում նշված սարքավորումը (այսուհետ՝ «Սարքավորում») ընդամենը _____ (գումարը տառերով) ՀՀ դրամ գնման գնով:

1.2. Վաճառողը պարտավորվում է հավելվածում նշված Սարքավորումը մատակարարել կանխավճարը ստանալուց _____ (----) օրվա ընթացքում:

1.3. Սարքավորման համար վճարումն իրականացվում է հետևյալ կերպ.

1.3.1. կանխավճար 20%(քսան), Պայմանագիրը կնքելուց 4 (չորս) բանկային օրվա ընթացքում՝ Վաճառողի բանկային հաշվին՝ _____,

1.3.2. վերջնավճար 80%(ութսուն), սարքավորումը ստանալուց հետո 3(երեք) բանկային օրվա ընթացքում՝ Վաճառողի բանկային հաշվին՝ _____,

1.3.3. կանխավճարը և վերջնավճարը ստանալու դիմաց Վաճառողը Գ-նորդին կտրամադրի հաշիվ-ապրանքագրերը:

1.4. Ապրանքների Վարձակալի կողմից ստացման փաստը արձանագրվում է հանձնման-ընդունման ակտով, որը կազմվում է 2(երկու) օրինակից և ստորագրվում է Վարձակալի /որպես Գ-նորդի ներկայացուցիչ/ և Վաճառողի միջև և հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մաս:

1.5. Գ-նորդը Սարքավորումը գնում է Վաճառողից Վարձակալին Ֆինանսական վարձակալությամբ (լիզինգ) հանձնելու համար՝ համաձայն Ֆինանսական վարձակալության պայմանագրի պայմանների:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Վաճառողը պարտավորվում է՝

2.1.1. Ապահովել Սարքավորման նոր լինելը և լիարժեք կոմպլեկտավորությունը:

2.1.2. Սարքավորումը հանձնելու հետ միաժամանակ Վարձակալին հանձնել դրա պատկանելիքները (ներառյալ Սարքավորման անխափան գործողության համար անհրաժեշտ բոլոր բաղադրամասերը), ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը (տեխնիկական անձնագիրը, որակի հավաստագիրը, շահագործման վերաբերյալ կանոնները և այլն):

2.1.3. Գ-նորդին հանձնել պատշաճ որակի և երրորդ անձանց իրավունքներից ազատ Սարքավորում:

2.1.4. Սարքավորումն իր ծախսերով տեղափոխել և հանձնել Վարձակալին՝ _____ հասցեով:

2.1.5. Մինչև սույն Պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից Սարքավորումն առգրավելու դեպքում հատուցել Գ-նորդի վնասները:

2.1.6. Սարքավորումներում անսարքություններ առաջանալու մասին Վարձակալին տեղեկացնելուց հետո 2(երկու) օրվա ընթացքում , կատարել անսարքության պատճառի հետազոտում:

2.1.7. Հնարարավորության դեպքում կատարել անսարքության վերացում Վաճառողի տարածքում:

2.1.8. 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կատարել անհրաժեշտ վերանորոգման, Սարքավորման կամ նրա մի մասի փոխանակման աշխատանքները Վաճառողի տարածքում:

2.1.9. Կատարել Սարքավորման վերանորոգումը կամ փոխարինումը Սարքավորումն արտադրող ֆիրմայում, եթե անսարքությունը հնարավոր չէ վերացնել առանց արտադրող ֆիրմայի միջամտության: Այս

դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Վարձակալին, վերոհիշյալ և փոխարինման/վերանորոգման ժամկետների մասին: Այդ ժամկետը պետք է լինի ոչ ավել քան 30(երեսուրե) աշխատանքային օր:

2.2 Վաճառողը իրավունք ունի

2.2.1 Հրաժարվել սույն Պայմանագրի կատարումից, եթե Գնորդը չի վճարել սույն Պայմանագրով նախատեսված Սարքավորման գինը:

2.3 Գնորդը պարտավորվում է՝

2.3.1 Վճարել Սարքավորման համար, համաձայն սույն Պայմանագրի 1.3 կետի պահանջների:

2.4 Գնորդն իրավունք ունի

2.4.1 Եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված Սարքավորումը, հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց, իսկ եթե Սարքավորման համար վճարվել է գումար, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

2.4.2 Սարքավորման պատկանելիքները և փաստաթղթերը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից Վարձակալին չհանձնելու դեպքում հրաժարվել Սարքավորումից և պահանջել սարքավորման համար վճարված գումարը: Սարքավորման որակին առաջադրվող պահանջների խախտումների դեպքում, իր ընտրությամբ՝

2.4.2.1 Հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Սարքավորման համար վճարված գումարը:

2.4.2.2 Պահանջել փոխարինելու անպատշաճ որակի Սարքավորումը սույն Պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով:

3. Ներկայացումներ և Երաշխիքներ

3.1 Վաճառողը ներկայացնում է և երաշխավորում Գնորդին, որ՝

3.1.1 Վաճառողը Հայաստանի Հանրապետությունում պատշաճ կերպով գրանցված իրավաբանական անձ է և ունի իրավունք և լիազորություն սեփականության իրավունքով ունենալ իր գույքը և կատարել սույն Պայմանագրով նախատեսված գործարքները:

3.1.2 Սարքավորումը սեփականության իրավունքով պատկանում է Վաճառողին, և ծանրաբեռնված չէ որևէ երրորդ անձի որևէ իրավունքով կամ պահանջով:

3.1.3 Սույն Պայմանագիրը կնքելով չի խախտել որևէ այլ պայմանագրի որևէ դրույթ և չի խախտում իր որևէ պարտավորություն:

3.1.4 Վաճառողի դեմ չկա հարուցված կամ վերադաս որևէ դատավարություն:

4 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից (տույժերից և տուգանքներից), եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Դրանք այն իրավիճակներն են, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների պատշաճ կատարումը: Նման հանգամանքների առաջացման դեպքում Կողմը պարտավոր է անհապաղ գրավոր ձևով տեղյակ պահել մյուս Կողմին: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է մեկ ամսից ավելի, ապա Գնորդն իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը և պահանջել վերադարձնելու Սարքավորման համար վճարված գումարը:

5 Կողմերի Պատասխանատվությունը

5.1 Սարքավորման պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը Վարձակալին է անցնում Սարքավորումը նրան հանձնելու պահից: Մինչև Վարձակալին Սարքավորումը հանձնելը դրա կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը կրում է Վաճառողը:

5.2 Գնորդը Վարձակալի առջև չի կրում Սարքավորման որակի կոմպլեկտայնության, դրա մատակարարման ժամկետների խախտման, Վաճառողի կողմից սույն Պայմանագիրն անպատշաճ կատարելու պատասխանատվություն:

5.3 Գնորդը Վարձակալին է հանձնում Վաճառողի կողմից իր պարտականությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման, ինչպես նաև Սարքավորման թերությունները վերացնելու կապակցությամբ Վաճառողի նկատմամբ պահանջի իր իրավունքը:

6 Ընդհանուր դրույթներ

6.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

6.2 Ղեկավարող օրենսդրություն: Սույն Պայմանագիրը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ:

6.3 **Վեճերի լուծում:** Սույն պայմանագրի առնչությամբ ծագած բոլոր վեճերը, որոնք չեն լուծվել բանակցությունների միջոցով հանձնվում են դատարանի քննությանը:

6.4 **Փոխանցում:** Վաճառողն իրավունք չունի փոխանցելու սույն Պայմանագիրը երրորդ անձին՝ առանց Գնորդի գրավոր համաձայնության: Գնորդը իրավունք ունի փոխանցելու սույն Պայմանագիրը՝ առանց Վաճառողի համաձայնության:

6.5 **Ծանուցումներ:** Սույն Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները, համաձայնությունները, հրաժարումները և այլ հաղորդակցությունները պետք է լինեն գրավոր և հանձնվեն անձամբ (գրավոր ստացականով) կամ ուղարկվեն ֆաքսով (գրավոր հաստատումով) ներքոհիշյալ համապատասխան ֆաքսի համարով:

6.6 **Լրացումներ:** Սույն Պայմանագիրը կարող է լրացվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ:

6.7 **Դրույթների Մասնատեղիություն:** Եթե սույն Պայմանագրի որևէ դրույթ դառնում է անվավեր կամ անօրինական, ապա այդպիսի անվավերությունը կամ անօրինականությունը չի ազդում սույն Պայմանագրի որևէ այլ դրույթների վավերականության կամ օրինականության վրա: Կողմերը չեն շահարկի սույն Պայմանագրի լրիվ կամ մասամբ անվավեր դառնալը կամ իրավաբանական ուժը կորցնելը՝ Պայմանագրով սահմանված իրենց պարտավորություններից խույս տալու համար, այլ կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը սույն Պայմանագրի նպատակը և մտադրությունները գործող օրենսդրության համաձայն իրականացնելու համար:

6.8 **Գաղտնիություն:** Բացառությամբ հրապարակայնորեն ստացված տեղեկությունների, Կողմերը համաձայնվում են չհրապարակել սույն Պայմանագրի առնչությամբ ստացված տեղեկությունները բացի այն դեպքերի, երբ պահանջվում է օրենքով:

6.9 Սույն Պայմանագիրը կնքվել է 3 օրինակից, մեկական օրինակ տրվում է Կողմերին և մեկ օրինակ Վարձակալին:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈՂԳՅԱԼԻ, Կողմերը, ներկայացված իրենց լիազոր ներկայացուցիչներով, կնքեցին սույն Պայմանագիրը Երևանում վերևում նշված ամսաթվով:

«Վաճառող»

«Գնորդ»

Համաձայն եմ, «Վարձակալ»

ՀԱՎԵԼՎԱԾ

Սարքավորման նկարագիր՝

Արտադրող՝

Արտադրման երկիրը՝

«Վաճառող»	«Գնորդ»
<hr/> <hr/> <hr/>	

Համաձայն եմ, «Վարձակալ»

(ստորագրություն)

Սարքավորումը Վարձակալին հանձնելու վերաբերյալ ակտ

Համաձայն __. __. 200 թ-ին «----» ՓԲԸ, («Վարձատու») և «_____» («Վարձակալ») միջև կնքված ֆինանսական վարձակալության (լիզինգի) և __. __. 200 թ-ին «-----» ՓԲԸ, («Գնորդ») և «_____» __-ի («Վաճառող») միջև կնքված Սարքավորման առուվաճառքի պայմանագրերի՝ __ __ 200 թ-ին Երևանում Վաճառողը Վարձակալին հանձնեց Սարքավորումը (սարքավորման տվյալները):

Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրում նախատեսված Վճարների գրաֆիկով հաշվարկները սկսվում են Վարձակալին Սարքավորման հանձնման օրվանից:

Հանձնեց՝

Վաճառող

«_____» _____

Իրավաբանական հասցե՝

Գրանցման Վկայական՝

գրանցման համար

ՀՎՀՀ

Բանկային հաշիվ՝

Պաշտոնը՝ Ա.Ա.

Ընդունեց՝

Վարձակալ

«__» _____

Հասցե՝

Գրանցման համար՝

Գրանցման ամսաթիվ.

Գրանցման վկայական՝

ՀՎՀՀ՝

(ստորագրություն)

Հաստատում է՝

Վարձատու

«» ՓԲԸ,

(ստորագրություն)

(ստորագրություն)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԼԻԶԻՆԳԻ) ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(կնքման վայրը)

«-----» ----- ք.

----- այսուհետ՝
(կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը)
«Վարձատու», ի դեմս -----,
(ազգանունը, անունը, պաշտոնը),
որը գործում է ----- հիման վրա,
(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)
մի կողմից, և -----, այսուհետ՝
(կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի, ազգանունը, անունը)
«Վարձակալ», ի դեմս -----,
(ազգանունը, անունը, պաշտոնը),
որը գործում է ----- հիման վրա, մյուս
(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)
կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է Վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել Վարձակալի կողմից որոշած Վաճառողից և վճարի դիմաց հանձնել Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: 1.2. Սույն պայմանագրով վարձակալության է տրվում -----, այսուհետ՝ «Լիզինգի օբյեկտ»:

(նկարագրել գույքը)

1.3. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Լիզինգի օբյեկտի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.4. Վարձակալության հանձնված Լիզինգի օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Վարձակալից Լիզինգի օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և Լիզինգի օբյեկտի նշանակությանը համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ նուծելու վարձավճարը.

2.1.3. եթե Վարձակալը Լիզինգի օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Լիզինգի օբյեկտի նշանակությանն անհամապատասխան, ապա պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.1.4. վերահսկել և Վարձակալից պահանջել կատարելու Լիզինգի օբյեկտի ընթացիկ և հիմնական վերանորոգումը:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. ծանուցել Վաճառողին, որ Լիզինգի օբյեկտը նախատեսված է Վարձակալին վարձակալության հանձնելու համար.

2.2.2. սույն պայմանագիրը ստորագրելուց հետո ----- օրվա ընթացքում Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցել Լիզինգի օբյեկտը ձեռք բերելու համար նախատեսված գումարը:

2.2.3. Վարձակալին հանձնել Վաճառողի կողմից իր պարտականությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման, ինչպես նաև Լիզինգի օբյեկտի թերությունները վերացնելու կապակցությամբ Վաճառողի նկատմամբ պահանջի իր իրավունքը:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Վաճառողից պահանջել՝ Վարձատուի կողմից նրա հաշվարկային հաշվին սույն պայմանագրի 2.2.2. կետում սահմանված գումարը փոխանցելուց հետո ----- ժամկետում, իրեն տրամադրելու Լիզինգի օբյեկտը.

2.3.2. Վաճառողից պահանջել իրեն տրամադրելու Լիզինգի օբյեկտի պատկանելիքներն ու փաստաթղթերը (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն).

2.3.3. Վաճառողից պահանջել Լիզինգի օբյեկտն իրեն տրամադրելու սույն պայմանագրի պայմաններին և Լիզինգի օբյեկտի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.3.4. Լիզինգի օբյեկտի օգտագործմանը լրիվ կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ Վաճառողից պահանջել անհատույց վերացնելու Լիզինգի օբյեկտի թերությունները կամ հատուցելու դրա թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.5. Վաճառողին ներկայացնել Լիզինգի օբյեկտի որակին, կոմպլեկտայնությանը վերաբերող այլ պահանջներ:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Ժամանակին մուծել Լիզինգի օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը (վարձավճարը).

2.4.2. Լիզինգի օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.4.3 Լիզինգի օբյեկտը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ և հիմնական վերանորոգումը և կրել Լիզինգի օբյեկտը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

3. Հաշվարկները

3.1. Սույն պայմանագրով Լիզինգի օբյեկտի համար վարձավճարի չափը կազմում է ամսական ----- դրամ:

3.2. 3.1. կետում նշված գումարը Վարձակալը փոխանցում է Վարձատուի հաշվարկային հաշվին յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, սակայն ոչ ուշ քան հաջորդ ամսվա տարը:

4. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

4.1. Վարձատուի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

4.1.1. Լիզինգի օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Լիզինգի օբյեկտի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

4.1.2. էականորեն վատթարացրել է Լիզինգի օբյեկտի վիճակը.

4.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

4.1.4. սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Լիզինգի օբյեկտի ընթացիկ և հիմնական վերանորոգումը:

4.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

4.2.1. Վարձատուն խոչընդոտներ է ստեղծել Լիզինգի օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.

4.2.2. Վարձատուն չի կատարել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով Վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության հանձնված Լիզինգի օբյեկտի և Վաճառողի ընտրության համար:

5.2. Վարձատուն Վարձակալի առջև պատասխանատվություն չի կրում իր և Վաճառողի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի պահանջները Վարձակալի պահանջով՝ Վաճառողի կողմից չկատարելու համար:

5.3. Լիզինգի օբյեկտի պատահական կորստի և պատահական վնասվածքի ռիսկը Վարձակալին է անցնում Լիզինգի օբյեկտը նրան հանձնելու պահից:

5.4. Վարձակալը վճարումների կետանցի համար Վարձատուին վճարում է տուգանք՝ ամսական վարձավճարի գումարի ----- տոկոսի չափով, և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ամսական վարձավճարի գումարի ----- տոկոսի չափով:

5.5. Տույժերի վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց և խախտումները վերացնելուց:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Սույն պայմանագիրը գործում է «----» ----- թ.-ից մինչև «----» ----- թ.: Այն ուժի մեջ է մտնում պայմանագրից ծագող իրավունքները համապատասխան պետական մարմնում գրանցելու պահից:

7.2. Սույն պայմանագրի ժամկետի ավարտից հետո Լիզինգի օբյեկտն անցնում է Վարձակալի սեփականությանը՝ Վարձատուի և Վարձակալի կողմից լրացուցիչ համաձայնագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:

8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ----- դատարանի քննությանը:

(դատարանի անվանումը)

9. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է ----- լեզվով, -----
օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին
տրվում է մեկական օրինակ:

*10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և
ստորագրությունները*

Վարձատու

(հասցեն)

(բանկային վավերապայմանները)

(ստորագրություն)

Կ.Տ

Վարձակալ

(հասցեն)

(բանկային վավերապայմանները)

(ստորագրություն)

Կ.Տ